

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ

ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ




ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2009 ԹՎԱԿԱՆ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի (այսուհետև՝ Բանկ)

Վարչության հայտարարությունը

Մեր լավագույն տեղեկացվածության համաձայն Բանկի ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են Բանկի ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը, իսկ կառավարման մարմինների տարեկան զեկույցը ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում է Բանկի ընդհանուր վիճակը, բիզնեսի արդյունքները և զարգացումը և ներառում է այն հիմնական ռիսկերի նկարագիրը, որի հետ առնչվել կամ առնչվում է Բանկը:

Բանկի Վարչության անդամներ.

Աշոտ Օսիպյան	Վարչության նախագահ, Գործադիր տնօրեն		29.04.10.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Արթուր Դակոբյան	Վարչության նախագահի առաջին տեղակալ, Գործադիր տնօրենի առաջին տեղակալ		29.04.2010
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Դավիթ Դարությունյան	Վարչության նախագահի տեղակալ, Գործադիր տնօրենի տեղակալ		29.04.2010
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Տիգրան Գալստյան	Վարչության անդամ, Գլխավոր հաշվապահ		29.04.2010
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Գարիկ Աղամյան	Վարչության անդամ, Ռազմավարության և մեթոդոլոգիայի վարչության պետ		29.04.2010
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Արթուր Մելիքյան	Վարչության անդամ, Իրավաբանական վարչության պետ		29.04.2010
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

**ՈՐՊԵՍ ՀԱՇՎԵՏՈՒ ԹՈՂԱՐԿՈՂ
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-Ի ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ՏԱՐԵԿԱՆ
ՋԵԿՈՒՅՑԸ**

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի կառավարման մարմինների 2009 թվականի գործունեության տարեկան սույն զեկույցը ներկայացնում է՝

- Բանկի բիզնեսի արդյունքերի և զարգացման իրական պատկերի նկարագիրը,
- կարևոր դեպքերի նկարագիրը,
- Բանկի հետագա հնարավոր զարգացման նկարագիրը:

Ֆինանսական արդյունքներ

43,466.0 մլն. ՀՀ դրամ

2009 թվականի վերջին ԱՐԱՐԱՏԲԱՆԿԻ ընդհանուր ակտիվները կազմել են 43,466.0 մլն. ՀՀ դրամ, որը 2008թ. համեմատ աճել է 46.7 %-ով

16,145.7 մլն. ՀՀ դրամ

2009 թվականի վերջի դրությամբ ԱՐԱՐԱՏԲԱՆԿԻ վարկային պորտֆելը կազմել է 16,145.7 մլն. ՀՀ դրամ՝ 2008թ. համեմատ աճելով 32.5 %-ով

365.4 մլն ՀՀ դրամ

2009 թվականի արդյունքներով ԱՐԱՐԱՏԲԱՆԿԻ շահույթը կազմել է 365.4 մլն դրամ

17,090.9 մլն. ՀՀ դրամ

2009 թվականի վերջին ԱՐԱՐԱՏԲԱՆԿԻ հաճախորդներից ներգրավված միջոցները կազմել են 17,090.9 մլն. ՀՀ դրամ, որը 2008թ. համեմատ աճել է 40.8 %-ով

7,948.9 մլն. ՀՀ դրամ

2009 թվականի վերջին ԱՐԱՐԱՏԲԱՆԿԻ ընդհանուր կապիտալը կազմել է 7,948.9 մլն. ՀՀ դրամ, որը 2008թ. համեմատ աճել է 5.4 %-ով

44,448 հաճախորդ

2009 թվականի վերջին ԱՐԱՐԱՏԲԱՆԿԻ գործող հաճախորդների թիվը կազմել է 44,448, որը 2008թ.-ի վերջի համեմատ աճել է 18,423-ով կամ 70.8%-ով

38,140 հատ պլաստիկ քարտ

2009 թվականի վերջին ԱՐԱՐԱՏԲԱՆԿԻ կողմից քողարկված պլաստիկ քարտերի քանակը կազմել է 38,140 հատ, որը 2008թ.-ի վերջի համեմատ աճել է 17,098 հատով կամ 81.3%-ով

27 մասնաճյուղ

2009 թվականի ընթացքում բացվել են 2 հատ մասնաճյուղեր: Տարեվերջի դրությամբ Բանկի տարածքային ցանցն ընդգրկում է 27 հատ մասնաճյուղեր

Ակտիվներ

2009 թվականի արդյունքներով Բանկի ակտիվների աճի և կառուցվածքի միտումները ներկայացնելու համար նախ և առաջ անհրաժեշտ է անդրադառնալ տնտեսության իրական հատվածի իրավիճակին, որը հաշվետու տարում բացառիկ էր Հայաստանի համար:

Տարին աչքի ընկավ երկրի մակրոտնտեսական ցուցանիշների կտրուկ վատթարացմամբ, 2008 թվականից սկիզբ առած համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի բացասական ազդեցությունների խորացմամբ, որը դրսևորվեց առաջին հերթին ՀՆԱ կտրուկ անկմամբ, իսկ տնտեսության առանձին ճյուղերում նաև արտադրության ծավալների աննախադեպ կրճատմամբ:


Այս նոր մարտահրավերների պայմաններում Բանկը՝ վարելով ռիսկերի գնահատման և կառավարման ճկուն քաղաքականություն, կարողացավ ձևավորել որակյալ վարկային պորտֆել, պահպանել և ընդլայնել հաճախորդների բազան, հանդես գալով որպես իրական հատվածի ձեռնարկությունների կայուն և վստահելի գործընկերը:

Տնտեսական միջավայրի փոփոխություններին համահունչ 2009 թվականի 3-րդ եռամսյակից Բանկը՝ պահպանելով իրացվելիության բարձր մակարդակը, սկսեց վարել վարկավորման ընդլայնողական քաղաքականություն՝ միաժամանակ զգալի ֆինանսական ռեսուրսներ ներգրավելով տարբեր աղբյուրներից: Բանկը ակտիվ մասնակցություն ունեցավ նաև ՀՀ կառավարության աջակցությամբ իրականացվող գրեթե բոլոր հակաճգնաժամային վարկային ծրագրերում:

Գնահատելով ֆինանսական շուկայում զարգացումները, 2009 թվականի օգոստոսին Բանկի խորհուրդը որոշում կայացրեց «Իզմիրլյան-Եվրասիա» Ունիվերսալ վարկային կազմակերպություն» ՍՊԸ 100% բաժնետոմսերի ձեռքբերման վերաբերյալ:

Ձեռնարկված միջոցառումների հաշվին հաջողվեց ճգնաժամի պայմաններում զգալիորեն բարելավվել Բանկի ակտիվապասիվային ցուցանիշները և 2009 ֆինանսական տարում, նախորդ տարվա համեմատ, ապահովել Բանկի ակտիվների 13,833,742 հազ. ՀՀ դրամով կամ 46.7%-ով աճ, որոնք տարեվերջին կազմեցին 43,466,009 հազ. ՀՀ դրամ:

Նախորդ տարիների համեմատականով Բանկի ակտիվների շարժը ներկայացված են ստորև բերվող գրաֆիկում:




2009 ֆինանսական տարում Բանկի ակտիվների աճը հիմնականում պայմանավորված էր հաճախորդներին տրամադրված վարկերի՝ 3,956,159 հազ. ՀՀ դրամ կամ 32.5%, աճով, որը հետևանք էր վարկավորման ոլորտում Բանկի կողմից իրականացվող արդյունավետ քաղաքականության, Բանկի մասնաճյուղերի ցանցի աստիճանական ընդլայնման ու վարկավորման գործընթացում վերջիններիս ներգրավվածության աստիճանի բարձրացման:

Ակտիվների կառուցվածքում 2008 թվականի համեմատ 1, 926,774 հազ. ՀՀ դրամով կամ 64.3%-ով աճել են Վաճառքի համար մատչելի ներդրումները, ինչը պայմանավորված է «Իզմիրլյան-Եվրասիա» Ունիվերսալ վարկային կազմակերպություն» ՍՊԸ 100% բաժնետոմսերի ձեռքբերմամբ:

Վարկեր

Հաշվետում տարում, նախորդ տարվա համեմատ Բանկի հաճախորդներին տրամադրված վարկերն աճել են 3,956,159 հազ. ՀՀ դրամով կամ 32.5%-ով: Հատկանշական է, որ տնտեսության անկունային իրավիճակի պայմաններում, Բանկը հաշվետու տարում ևս շարունակեց ակտիվ քաղաքականությունը վարկավորման տարբեր ուղղություններով: Մասնավորապես, փոքր բիզնեսին տրամադրված վարկերի մնացորդը կազմել է 4,709,163 հազ. դրամ (127% կամ 2,634,394 հազ.ՀՀ դրամով գերազանցել է նախորդ տարվա ցուցանիշը), միջին բիզնեսին տրամադրված վարկերի մնացորդը կազմել է 1,452,988 հազ. ՀՀ դրամ (51% կամ 491,244 հազ.ՀՀ դրամով գերազանցել է նախորդ տարվա ցուցանիշը): Միաժամանակ ուշադրություն է դարձվել հիփոթեքային վարկավորման իրականացմանը, որի արդյունքում հիփոթեքային վարկերի մնացորդը կազմել է 1,725,912 հազ. ՀՀ դրամ և գերազանցել է 2008թ. ցուցանիշը 14% կամ 212,063 հազ. ՀՀ դրամով:



2009 թվականի ընթացքում Բանկի կողմից տրամադրվել են շուրջ 24.6 մլրդ. ՀՀ դրամի վարկեր, որը գերազանցում է 2008 թվականի (21. 7 մլրդ. ՀՀ դրամ) ցուցանիշը 2.9 մլրդ. ՀՀ դրամով:

2009 թվականին տրամադրված վարկերի աճը պայմանավորված էր տարվա ընթացքում Բանկի ռազմավարությամբ և վարկավորման քաղաքականությամբ ամրագրված սկզբունքների շարունակական իրականացմամբ՝ միկրո, փոքր և միջին բիզնեսի վարկավորման ակտիվ գործընթացով, մասնաճյուղային ցանցի ընդլայնմամբ, վարկային ծրագրերում մասնաճյուղերի ներգրավմամբ ու վարկավորման տարածաշրջանային կենտրոնների ձևավորմամբ:

Վարկային ներդրումների աճի բարձր տեմպերի պահպանմանը զուգահեռ, Բանկում մշտապես ուշադրություն է դարձվում վարկառուների գործունեության պատշաճ վերլուծության, հնարավոր ռիսկերի բացահայտման և կառավարման, ինչպես նաև հետագա մոնիտորինգի գործընթացների զարգացմանը: Հատուկ պետք է նշել, որ Բանկի մասնագետների և միջազգային խորհրդատուների համագործակցությամբ մշակվել է Վարկառուների ռիսկի գնահատականի և Վարկառուի ապահովվածության որակի բազմագործոնային գնահատականի մեթոդաբանությունը, որը թույլ է տալիս ոչ միայն գնահատել վարկառուի գործունեության և վարկի ապահովման միջոցի հետ կապված ռիսկի աստիճանը, այլ նաև ըստ հաշվարկված արդյունքի սահմանել տրամադրվող վարկի տոկոսադրույքը: Բանկում կիրառվում է նաև վարկառու կազմակերպության կառավարման որակի գնահատականի մոդելը, որի շնորհիվ հնարավորություն է ստեղծվել բացահայտել կառավարման օղակի ուժեղ և թույլ կողմերը, ինչպես նաև հնարավոր վտանգները:

Նշված մոդելներն իրենցից ներկայացնում են համաշխարհային լավագույն բանկային փորձի արդյունք և հաջողությամբ ներդրվել ու կիրառվում են առաջատար բանկերում:

Բանկում մշտական բնույթ են կրում բարձրակարգ վարկային մասնագետների պատրաստմանը ու նորագույն վարկային տեխնոլոգիաների կատարելագործման գործընթացները, որի շրջանակներում շարունակվեցին դեռևս 2008թ. սկիզբ առած վարկային մասնագետների վերապատրաստման

ծրագրերը, որոնց մասնակցեցին ինչպես նոր հավաքագրված աշխատակիցները, այնպես էլ Բանկի գլխամասային գրասենյակի և մասնաճյուղերի համապատասխան մասնագետները: Դասընթացները կազմակերպվեցին ինչպես Բանկի, այնպես էլ միջազգային բարձր համբավ ունեցող մի շարք խորհրդատվական կազմակերպությունների կողմից, որոնց թվում են գերմանական BFC ընկերությունը, ամերիկա-բրիտանական DAI ընկերությունը և Բանկի Ինստիտուցիոնալ Ջարգացման Ծրագիրն իրականացնող կանադական CRC Sogema ընկերությունը:

Միջազգային վարկային ծրագրեր

2009թ. Բանկը շարունակեց ակտիվ մասնակցություն ցուցաբերել տարբեր միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից Հայաստանում իրականացվող վարկային ծրագրերում:

Ի հավելումն Վերակառուցման և Ջարգացման Եվրոպական Բանկի (EBRD) հետ կնքված վարկային պայմանագրի և Առևտրի ֆինանսավորման համաձայնագրի, հաշվետու տարվա ընթացքում Բանկը կնքեց մի շարք պայմանագրեր վարկավորման ներքոշարադրյալ ծրագրերում մասնակցելու նպատակով.

1. Փոքր և միջին ձեռնարկությունների ֆինանսական միջոցների հասանելիության ծրագիր (Համաշխարհային Բանկի կողմից տրամադրված միջոցներով)
2. Տնտեսության կայունացման վարկավորման ծրագիր (Ռուսաստանի Դաշնության կողմից տրամադրված միջոցներով)

Հարկ է նշել, որ վերը նշված ծրագրերի մասնակից բանկերի ընտրության շրջանակներում Բանկում միջազգային փորձագետների մասնակցությամբ կազմակերպվեցին մի շարք ստուգայցներ և վերլուծություններ, որի արդյունքերով ԱՐԱՐԱՏԲԱՆԿ-ը՝ ընգրկվելով մասնակիցների ցանկում, ստացավ բարձր գնահատական՝ ի շնորհիվ ներդրված և կիրառվող ժամանակակից տեխնոլոգիաների, փոքր և միջին բիզնեսի վարկավորման ոլորտում արդյունավետ փորձի, հմուտ և բարձրորակ անձնակազմի:

Տարվա ընթացքում ակտիվորեն շարունակվել է նաև Բանկի համագործակցությունը գերմանական KfW բանկի «Հիփոթեքային շուկայի կայուն զարգացում» և շվեյցարական Իզմիրյան Հիմնադրամի հետ իրականացվող վարկային ծրագրերի շրջանակներում:

2009 թվականի վերջում ավարտվեցին Վերակառուցման և Ջարգացման Եվրոպական Բանկի հետ հերթական՝ համաֆինանսավորման, վարկային ծրագրի պայմանագրի կնքման նախապատրաստական աշխատանքները, որի արդյունքում Բանկը լրացուցիչ հնարավորություններ կստանա խոշոր ծրագրերի ֆինանսավորման համար:

Արժեթղթեր

Բանկը՝ հանդիսանալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ընտրված գործակալ՝ միջնաժամկետ և երկարաժամկետ պարտատոմսերի շուկայում և դիլեր՝ ՀՀ ֆինանսների նախարարության և Կենտրոնական Բանկի կողմից թողարկված կարճաժամկետ պարտատոմսերի շուկայում, հաշվետու ֆինանսական տարում, զգալիորեն աշխուժացրեց իր գործունեությունը ՀՀ պետական արժեթղթերի շուկայում, որտեղ կատարված գործառնությունների ծավալները կազմեցին՝

Առաջնային շուկայում՝ 18,019,933 հազ. ՀՀ դրամ.

Երկրորդային շուկայում՝ 49,101,049 հազ. ՀՀ դրամ:

Նշված գործառնությունների արդյունքում, ՀՀ պետական արժեթղթերում Բանկի ներդրումային պորտֆելը կազմել է 2,802,166 հազ. ՀՀ դրամ կամ ընդհանուր ակտիվների 6.45%-ը՝ նախորդ տարվա 15.1%-ի դիմաց: Այնուամենայնիվ, հաշվի առնելով 2008-2009թթ. Հայաստանի արժեթղթերի շուկայում ստեղծված իրավիճակը, Բանկը հաշվետու տարվա ընթացքում վերանայեց իր ներդրումային քաղաքականությունը՝ նախապատվություն տալով կարճաժամկետ և միջնաժամկետ պետական պարտատոմսերին: Արժեթղթերի պորտֆելի կառուցվածքի վերանայման և վերակազմավորման գործնթացի արդյունքում, ՀՀ պետական արժեթղթերում Բանկի ներդրումային պորտֆելի գերակշռող մասը՝ մոտ 80%-ը, կազմեցին միջնաժամկետ (1-3 տարի ժամկետով) պարտատոմսերը:


ՀՀ ֆինանսների նախարարության գործակալի գործառնությունների իրականացման շրջանակներում ԱՐԱՐԱՏԲԱՆԿԸ իրականացնում է պետական պարտատոմսերի պարտադիր գնանշումներ Հայաստանի ֆոնդային բորսայում և դրա հետ մեկտեղ նաև՝ պարտատոմսերի առք ու վաճառքի ակտիվ գործառնություններ Հայաստանի ֆոնդային բորսայում:

Բանկը էականորեն ավելացրել է նաև ռեպո և հակադարձ ռեպո գործառնությունների ծավալները ինչպես միջբանկային շուկայում, այնպես էլ Բանկի հաճախորդների հետ կատարվող գործառնություններում: Ձուգահեռաբար Բանկը 2009թ.-ի ընթացքում իրականացրել է արժեթղթերով սվոփ գործառնություններ:

Միաժամանակ անհրաժեշտ ենք համարում նշել, որ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ-ը կարևորում է Հայաստանում արժեթղթերի՝ պետական և կորպորատիվ, շուկայի զարգացման անհրաժեշտությունը և մշտապես պատրաստական է աջակցել և իրականացնել միջոցառումներ՝ շուկայի շարունակական կատարելագործման և զարգացման ուղղությամբ:

Այդ նպատակով, Բանկի ղեկավարությունը հաշվետու տարվա հուլիսին կազմակերպեց «Արևելյան և Կենտրոնական Եվրոպայի ֆինանսական շուկաների զարգացումներն ու հեռանկարները և Հայաստանը» խորագրով կլոր սեղան, որին մասնակցեցին ՀՀ կենտրոնական բանկի, հայաստանյան բանկերի և ներդրումային ընկերությունների, տնտեսվարող կազմակերպությունների ղեկավարներ և Բանկի հաճախորդներ: Որպես հիմնական զեկուցող հանդես

Եկան Բանկի կողմից հրավիրված Վարչավայի ֆոնդային բորսայի նախագահ Լյուդվիգ Սորոլսակին և նրա կողմից գլխավորած պատվիրակության այլ անդամներ:



Արտարժույթային գործառնություններ

Հաշվետու ֆինանսական տարում, Բանկը՝ հանդիսանալով “NASDAQ OMX Armenia” անդամ, ակտիվ մասնակցություն է ցուցաբերել ինչպես բորսայի արտարժույթային գործառնությունների հարթակում, այնպես էլ շուկայից դուրս:

Արդյունքում արտարժույթային գործառնությունների ծավալներն ըստ արտարժույթների կազմել են.

- ✓ ԱՄՆ դոլարով գործարքների ծավալը՝ 452,884 հազ. ԱՄՆ դոլար, որից 85,400 հազ. ԱՄՆ դոլարը բորսայում.
- ✓ ՌԴ ռուբլով գործարքների ծավալը՝ 1,353,159 հազ. ՌԴ ռուբլի,
- ✓ Եվրո գործարքների ծավալը՝ 231,130 հազ. եվրո:


Բանկը իրականացնում է նաև մրցակցային գնանշումներ արտարժույթային միջբանկային շուկայում, որի հետևանքով Բանկի ծառայություններից օգտվում են մի շարք հայկական բանկեր:

Միաժամանակ հաշվետու տարվա ընթացքում Բանկը զգալիորեն ավելացրել է նաև արժույթային ածանցյալ գործիքներով գործառնությունների ծավալները, որտեղ գերակշռող մասը կազմել են արժույթային սվոփ գործարքները:

Վերը նշված գործառնությունների արդյունքում, հաշվետու ֆինանսական տարում արտարժույթի առք ու վաճառքից ստացված զուտ եկամուտը կազմել է 310,285 հազ. ԶԶ դրամ:

Արտարժույթի առք ու վաճառքի ծավալների բաշխվածությունն ըստ արժույթների բերված է ստորև ներկայացված գրաֆիկում:


ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ԱՌՔ ՈՒ ՎԱՃԱՌՔԻ ԾԱՎԱԼՆԵՐ, հազ. դրամ



Պարտավորություններ և Կապիտալ

Հաշվետու ֆինանսական տարում, նախորդ տարվա համեմատ, Բանկի պասիվների աճը (13,833,742 հազ. ՀՀ դրամով) պայմանավորված էր ինչպես պարտավորությունների, այնպես էլ ընդհանուր կապիտալի աճով, որոնք համապատասխանաբար կազմել են 13,429,358 հազ. և 404,384 հազ. ՀՀ դրամ:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է պասիվների կառուցվածքը նախորդ տարիների համեմատականներով:



2008 թվականի համեմատ, պարտավորությունների աճը հիմնականում պայմանավորված է հաճախորդներից ներգրավված միջոցների աճով՝ 40.8%-ով կամ 4,948,436 հազ. ՀՀ դրամով, ինչն արդյունք էր Բանկի մասնաճյուղային ցանցի ընդլայնման, ակտիվ գործելակերպի և գործարար շրջանակներում ու բնակչության մոտ Բանկի հանդեպ վստահության և ճանաչելիության:

Որպես բնակչության վստահությունը բնորոշող հիմնական չափորոշիչ անհրաժեշտ ենք համարում նշել ֆիզիկական անձանցից ներգրավված ժամկետային ավանդների աճը, որը, չնայած ճգնաժամային գործոններին (միջազգային տրանսֆերտների, եկամուտների անկում, գործազրկության աճ), նախորդ տարվա համեմատ կազմեց 4.7%-ով:

Հաշվետու տարում, Բանկն իրականացրեց 2008թ. թողարկված կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի մարումը՝ 400,000 հազ. ՀՀ դրամ ծավալով:

Հավատարիմ մնալով արժեթղթերի շուկայում իր ակտիվ գործառնին և շարունակելով արդեն իսկ ձևավորված ավանդույթը, Բանկը նաև կազմակերպեց կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի հերթական՝ երրորդ թողարկումը՝ 250,000 հազ. ՀՀ դրամ ծավալով 10,000 ՀՀ դրամ անվանական արժեքով, 18 ամիս մարման ժամկետով, 10% տարեկան եկամտաբերությամբ և

արժեկտրոնի եռամսյակային վճարմամբ:


Կապիտալ

Հաշվետու տարում Բանկի կապիտալի աճն ապահովվել է ստացված զուտ շահույթի հաշվին և կազմել է 365,416 հազ. դրամ:

Բանկի կապիտալի աճի արդյունքում 1 բաժնետոմսի հաշվեկշռային արժեքը 31.12.09թ. դրությամբ կազմել է 7,412 դրամ՝ 5,000 ՀՀ դրամ անվանական արժեքի պարագայում:

Բաժնետոմսերի հաշվեկշռային արժեքի աճի դինամիկան ըստ տարիների գրաֆիկորեն ունի ունի հետևյալ պատկերը:

ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ՀԱՇՎԵԿՇՐԱՅԻՆ ԱՐԺԵՔԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ



Եկամուտներ և ծախսեր

Հաշվետու տարում, նախորդ տարվա համեմատ, Բանկի տոկոսային և նմանատիպ եկամուտներն աճել են 210,643 հազ. ՀՀ դրամով կամ 10.0 %-ով՝ կազմելով 2,310,770 հազ. ՀՀ դրամ:

Բանկի տոկոսային եկամուտների գերակշռող մասը բաժին է ընկնում վարկային ներդրումներից ստացված եկամուտներին (2,008,469 հազ. ՀՀ դրամ կամ 86.9%) և արժեթղթերից ստացված եկամուտներին (232,913 հազ. ՀՀ դրամ կամ 10.1%):

Հաշվետու տարում, Բանկի եկամուտների կազմում կոմիսիոն և այլ վճարումներից զուտ եկամուտները կազմել են 272,505 հազ. ՀՀ դրամ, որը նախորդ տարվա համեմատ, աճել է 92,894 հազ. ՀՀ դրամով կամ 51.7%-ով: Վերջինիս աճը պայմանավորված է Բանկի կողմից մատուցվող ծառայությունների տեսականու և մասնաճյուղային ցանցի ընդլայնմամբ:

Արտարժութային գործառնություններից ստացված զուտ շահույթը նվազել է 41,690 հազ. ՀՀ դրամով կամ 11.8%-ով: Արտարժութային գործառնություններից ստացված որոշակի շահույթի նվազումը պայմանավորված էր տարվա սկզբին գրանցված ՀՀ դրամի կտրուկ արժեզրկմամբ:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացվում է նախորդ երեք տարիների կտրվածքով Բանկի եկամուտների և ծախսերի դինամիկան, ինչպես նաև եկամուտների կառուցվածքը գրաֆիկական տեսքով:

հազ. ՀՀ դրամ	2007թ. ավարտված տարվա համար	2008թ. ավարտված տարվա համար	2008թ. ավարտված տարվա համար
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	928,935	2,100,127	2,310,770
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	374,559	713,908	1,001,842
Զուտ տոկոսային եկամուտ	554,376	1,386,219	1,308,928
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	134,095	282,940	372,222
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	58,424	103,329	99,717
Զուտ կոմիսիոն և այլ եկամուտներ	75,671	179,611	272,505
Արտարժութային գործառնություններից զուտ շահույթ/ (վնաս)	193,435	351,975	310,285
Վաճառքի նպատակով պահվող ներդրումներից զուտ շահույթ/ (վնաս)	210,630	17,191	63,378
Այլ եկամուտ	105,661	36,678	21,783
Վարկային կորուստների արժեզրկման ծախս	66,848	30,226	58,063

Անձնակազմի գծով ծախսեր	262,684	562,793	704,880
Հիմնական միջոցների մաշվածություն	76,528	122,089	158,289
Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա	6,152	7,795	8,068
Այլ ծախսեր	311,692	518,456	583,016
Շահույթ/(վնաս) հարկումից առաջ	415,869	730,315	464,563

Հաշվետու տարում, Բանկի տոկոսային և նմանատիպ ծախսերը կազմել են 1,001,842 հազ. ՀՀ դրամ, որը նախորդ տարվա համեմատ, աճել է 287,934 հազ. ՀՀ դրամով: Ծախսերի զգալի մասը բաժին է ընկնում հաճախորդների հաշիվների դիմաց վճարված տոկոսային ծախսերին, որը կազմել է 696,363 հազ. ՀՀ դրամ:

Հաշվետու ֆինանսական տարում Բանկի անձնակազմի գծով ծախսերն աճել են 142,087 հազ. ՀՀ դրամով՝ կազմելով 704,880 հազ. ՀՀ դրամ, հիմնական միջոցների մաշվածության ծախսերն աճել են 36,200 հազ. ՀՀ դրամով՝ կազմելով 158,289 հազ. ՀՀ դրամ, ոչ նյութական ակտիվների մաշվածության ծախսերը՝ 273 հազ. ՀՀ դրամով՝ կազմելով 8,068 հազ. ՀՀ դրամ:

Բանկի ոչ տոկոսային ծախսերի աճը հիմնականում պայմանավորված է Բանկի ֆինանսատնտեսական գործունեության ընդլայնման, նոր մասնաճյուղերի հիմնադրման և աշխատակիցների թվաքանակի ավելացման հետևանքով համապատասխան ծախսերի աճով: Ստորև ներկայացվում է Բանկի ծախսերի կառուցվածքը գրաֆիկի տեսքով:

Շահույթ, շահութաբերություն և շահաբաժիններ

Հաշվետու ֆինանսական տարվա արդյունքներով Բանկի զուտ շահույթը կազմել է 365,416 հազ. ՀՀ դրամ՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 215,456 հազ. ՀՀ դրամով կամ 37.1%-ով: Բանկի գործունեության շահութաբերության ցուցանիշները կազմել են՝

- ✓ ROE (կապիտալի շահութաբերություն)՝ 4.85.%,
- ✓ ROA (ակտիվների շահութաբերություն)՝ 1.12%:

Մեկ բաժնետոմսին ընկնող շահույթի ցուցանիշը (EPS) նախորդ տարվա համեմատ նվազել է 37.1%-ով և կազմել է 340.7 ՀՀ դրամ:

Նախորդ տարիների ընթացքում Բանկը շահաբաժիններ չի վճարել և ստացված շահույթն ամբողջությամբ ուղղվել է Բանկի կապիտալիզացիային:

Ռիսկերի կառավարում

2008 թվականին սկիզբ առած և 2009 թվականի ընթացքում շարունակվող համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում կարևոր և որոշիչ նշանակություն է ձեռք բերում ռիսկերի կառավարման գործուն և արդյունավետ համակարգի առկայությունը, որը հանդիսանում է Բանկի բնականոն զարգացման, պլանավորված ցուցանիշների ապահովման, վարկային պորտֆելի որակի գրավական:

Առաջնորդվելով նշված սկզբունքներով, Բանկում հաշվետու տարվա ընթացքում շարունակվել է ռիսկերի կառավարման ոլորտի բարեփոխումների և բարելավման ծրագիրը, որին ակտիվ մասնակցություն են ունեցել Բանկի հետ համագործակցող մի շարք միջազգային խորհրդատվական ընկերություններ:

Բանկի ինստիտուցիոնալ զարգացման ծրագիր իրականացնող կանադական CRC Sogema ընկերության հետ համագործակցության շրջանակներում փորձագիտական գնահատականի են ենթարկվել ռիսկերի կառավարմանն առնչվող ընթացակարգերը, Բանկում օգտագործվող մեթոդաբանությունը և մոդելները: Գնահատականի հիման վրա կատարված առաջարկությունների արդյունքում Բանկում ներ են դրվում համաշխարհային լավագույն փորձին համապատասխանող տեխնոլոգիաներ, որոնք հնարավորություն կտան հնարավորինս բացահայտել ռիսկերի մակարդակը և դրանց արդյունավետ կառավարման շնորհիվ նվազեցնել կամ չեզոքացնել հնարավոր կորուստները:

Վարկային ռիսկ

Գիտակցելով, որ վարկային ռիսկի արդյունավետ կառավարման համակարգը հանդիսանում է Բանկի վարկային ներդրումների ծավալների աճի և որակի մակարդակի գրավական, Բանկում հաշվետու տարվա ընթացքում շարունակվել են նշված ռիսկերի կառավարման մեթոդաբանության արդիականացման և բարելավման, ինչպես նաև Բանկում օգտագործվող մոդելները կատարելագործման աշխատանքները:

Ի հավելումն Բանկում արդեն իսկ օգտագործվող գործիքների՝ պոտենցիալ վարկառուի սնանկության հավանականության հաշվարկի մոդել, պոտենցիալ վարկառուի բալավորման մոդել, հաճախորդի կառավարման որակի գնահատման մոդել, Բանկում մեկնարկել են նաև Վարկառուի ռիսկի գնահատականի (BRR) և Վարկառուի ապահովվածության որակի գնահատականի (FRR) հաշվարկման մոդելների ներդրման աշխատանքները, որի արդյունքում Բանկում ոչ միայն հնարավորինս կբացահայտվի վարկային ռիսկի մակարդակը, այլ նաև ըստ բացահայտված ռիսկի գնահատականի հաճախորդին կառաջարկվի համապատասխան տոկոսադրույք:

Ներդրման աշխատանքներին զուգահեռ Բանկում ստեղծվել է Բանկի վարկառուների ֆինանսական ցուցանիշների պահպանման ամփոփ համակարգ,

որը թույլ է տալիս իրականացնել վիճակագրական վերլուծություններ և անհրաժեշտ հաշվարկներ:

Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության արդյունավետ կառավարման համակարգի առկայությունն իրենից ներկայացնում է Բանկի գործունեության համար կարևորագույն նշանակություն ունեցող հենասյուն և նախապայման, քանի որ դրա շնորհիվ կարգավորվում և կառավարվում են Բանկի գործունեությունը բնորոշող հիմնական ցուցանիշներից մեկի՝ Բանկի իրացվելիության, հետ կապված խնդիրները՝ ներառյալ ընդհանուր և ընթացիկ իրացվելիության ռիսկերը:

Ընդհանուր իրացվելիության ռիսկը կառավարելիս Բանկում օգտագործվող մեթոդաբանության համաձայն հաշվարկվում և կանխատեսվում են ներգրավվող և տեղաբաշխվող միջոցներն ըստ արժույթի, ժամկետայնության, ծավալների և կենտրոնացման աստիճանի:

Ընթացիկ ռիսկի կառավարման գործընթացը հիմնված է փաստացի և կանխատեսվող համապատասխան ցուցանիշների 1 օրյա, 1 շաբաթյա և 1 ամսյա շարժի տվյալների վրա՝ հիմք ընդունելով հետևյալ չափանիշները.

- ✓ բանկի վճարահաշվարկային օրական պարտավորությունների փոփոխությունները;
- ✓ դրամական հոսքերի օրական շարժի կանխատեսվող փոփոխությունները;
- ✓ վարկերի, ավանդների, արժեթղթերի, արժույթային սվոփի հետ կապված գործառնությունների օրական շարժի կանխատեսվող փոփոխությունները:

Միաժամանակ Բանկում մշտապես կազմակերպվում և իրականացվում են սթրես տեստեր, որոնց ընթացքում դիտարկվում են ժամկետային և ցպահանջ միջոցների արտահոսքի տարբեր մակարդակների պայմաններում առաջացող հնարավոր ռիսկեր:

Տոկոսադրույքների փոփոխման ռիսկ

Տոկոսադրույքների փոփոխման ռիսկի գնահատման համար հիմք են հանդիսանում ինչպես երկրի իրական հատվածի, այնպես էլ մրցակիցների կողմից ներկայացվող առաջարկի/ պահանջարկի միտումների վերաբերյալ կատարվող մշտական վերլուծությունները: Մշակվել է տոկոսադրույքների փոփոխման ռիսկի գնահատման մեթոդաբանություն, որը հիմնված է տոկոսադրույքների փոփոխման նկատմամբ զգայուն ակտիվների և պասիվների անհավասարակշռվածության վերլուծության և կառավարման վրա: Արժեթղթերում ներդրումների տոկոսադրույքի ռիսկը կառավարելիս Բանկում կիրառվում է դյուրացիայի մեթոդաբանությունը:

Արտարժութային ռիսկ

Այս ռիսկի կառավարման համար կարևոր նշանակություն ունի արտարժութային դիրքի կառավարումը, դրանից բխող հեջավորման գործիքների կիրառումը: Արտարժութային ռիսկի հնարավորինս նվազեցման նպատակով կիրառվում է ինչպես արտարժութային ակտիվների և պարտավորությունների ճեղքվածքի, այնպես էլ ՎԱՌ մեթոդաբանությունը: Բանկը ձգտում է վարել արդյունավետ արտարժութային քաղաքականություն՝ զուգակցելով արտարժութային դիրքի կառավարումը արդարացված ռիսկի մակարդակի հետ:

Արտարժութային դիրքի ամենօրյա հսկողությունը թույլ է տալիս իրական ռեժիմում հսկել դիրքը և զսպել արտարժութային ռիսկը:

Գործառնական ռիսկ

Գործառնական ռիսկի կառավարումն առավել մեծ կարևորություն ունի Բանկի համար և այս ռիսկը դիտվում է որպես ուղղակի կամ անուղղակի կորուստների վտանգ, որոնք պայմանավորված են Բանկի անձնակազմի ոչ համարժեք հմտության կամ սխալ գործողություններով, ընթացիկ աշխատանքի կազմակերպման և կատարման թերություններով, սարքավորումների տեխնիկական անսարքությամբ, ընթացակարգերի անկատարությամբ, ինչպես նաև արտաքին ծառայությունների թերացմամբ:

Բանկում ներդրված ընթացակարգերի շրջանակներում Բանկի կառուցվածքային ստորաբաժանումները տանում են համապատասխան հաշվառում և ամսական կտրվածքով ներկայացնում են հաշվետվությունների՝ գործառնական ռիսկի առաջացման դեպքերի վերաբերյալ: Միաժամանակ դրանք հաշվառվում են նաև հատուկ այդ նպատակով մշակված տեղեկատվական բազայում, որը հնարավորություն է տալիս կատարել վերլուծություններ և ձեռնարկել միջոցառումներ՝ նման ռիսկերի բացառման ուղղությամբ:

Ներքին հսկողության համակարգ

Բանկում գլխավոր խնդիրներից է հանդիսանում ներքին հսկողության գործունե և արդյունավետ համակարգի ապահովվումը: Նշված գործընթացի շարունակական զարգացման նպատակով բանկի կողմից իրականացվում են մի շարք միջոցառումներ, մասնավորապես.

- Բանկի գործունեությունը կանոնակարգող ներքին իրավական ակտերի պարբերաբար վերանայումն ու ընդունումը,
- Բանկի գործունեության համապատասխանության ապահովվումը ՀՀ օրենքների, այլ նորմատիվ իրավական ակտերի, ինչպես նաև Բանկում գործող ներքին իրավական ակտերի պահանջներին,
- Բանկի գործունեության արդյունքում առաջացող ռիսկերի բացահայտումը, գնահատումն ու շարունակական կառավարումը,
- Ֆինանսական և այլ հաշվետվությունների արժանահավատության ու ամբողջականության ապահովվումը:

Բանկում արդյունավետ ներքին հսկողության համակարգի պատշաճ ապահովման կարևոր օղակներից է հանդիսանում ներքին վերահսկողության համակարգը:

Հաշվետու ժամանակահատվածում ներքին աուդիտի կողմից Բանկի տարածքային և կառուցվածքային ստորաբաժանումներում իրականացվել են թվով 22 համալիր և 50 նպատակային ստուգումներ, ինչպես նաև երեք տասնյակից ավել գույքագրումներ և տարբեր ոլորտների ուսումնասիրություններ, հետևյալ հիմնական ուղղություններով.

- Գործող օրենքների և այլ իրավական ակտերի պահանջներին Բանկի գործունեության համապատասխանության գնահատում,
- Բանկում ներքին հսկողության համակարգի և ռիսկերի կառավարման արդյունավետության գնահատում,
- Հաշվապահական հաշվառման և ֆինանսական հաշվետվությունների արժանահավատության և ամբողջականության գնահատում,
- Բանկի կողմից իրականացվող ֆինանսական գործառնությունների ըստ ոլորտների ստուգում,
- Կատարված գործարքների, դրանց հաշվապահական ձևակերպումների և փաստաթղթերի համապատասխանության ստուգում,
- Բանկի տեղեկատվական տեխնոլոգիաների և համակարգերի գնահատում,
- «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի, նշված օրենքի հիման վրա ընդունված իրավական և Բանկի ներքին ակտերի պահանջների կատարման հսկողություն:

Բացի այդ, ներքին աուդիտի կողմից իրականացվում է իրական ժամանակի

ռեժիմում (on-line) Բանկի ընթացիկ գործունեության նկատմամբ ամենօրյա հսկողություն:

Ներքին աուդիտի վարչության կողմից վերը նշված գործառույթների իրականացման արդյունքում Բանկում ձևավորել է արդյունավետ և կառավարելի ներքին վերահսկողության համակարգ:

Նշված ստուգումների և ուսումնասիրությունների արդյունքների ամփոփումն ու վերլուծությունը, Ներքին աուդիտի կողմից ներկայացրած առաջարկությունները, ինչպես նաև Բանկի համապատասխան կառավարման մարմինների կողմից քննարկումն ու որոշումների ընդունումը նպատակաուղղվել են բացահայտված խնդիրների վերացմանը, ռիսկերի կառավարմանը, կանխարգելիչ միջոցառումների մշակմանը և այդ ամենի արդյունքում Բանկի գործունեության ընդհանուր ռիսկայնության նվազեցմանն ու արդյունավետ ներքին հսկողության համակարգի ապահովմանը:

Ծառայություններ և հաճախորդներ

Հաշվետու ֆինանսական տարում Բանկը շարունակեց հաճախորդներին վճարահաշվարկային ծառայությունների մատուցման ընդլայնման գործընթացը՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով դրանց որակին և հաճախորդների պահանջունքների լիարժեք բավարարմանը:

Բանկի վճարահաշվարկային գործառնությունների ծավալների աճի մասին է վկայում 2009 թվականին, նախորդ տարվա համեմատ, կոմիսիոն և այլ եկամուտների տեսքով ստացված զուտ եկամուտների 51.7 %-ով աճը:

Բանկի առաջարկվող ծառայությունների շարունակական կատարելագործման գործընթացը մշտապես գտնվում են Բանկի ղեկավարության ուշադրության կենտրոնում: Ծառայությունների սպասարկման որակի հաճախակի դիտարկումները, հաճախորդների շրջանում «SERVQUAL» մեթոդաբանության հիման վրա կազմակերպվող հարցումները հնարավորություն են տալիս արագ արձագանքել և իրականացնել մատուցվող ծառայությունների ձևափոխման կամ բարելավման միջոցառումներ, որը դրական է ազդում սպասարկման որակի բարձրացման, նոր հաճախորդների ներգրավման և Բանկի եկամուտների ավելացման վրա:

Բանկում պարբերաբար իրականացվում են հաճախորդների նպատակային խմբերի հետ հանդիպումներ, որոնց արդյունքներով ներկայացվում են առաջարկություններ և կատարվում են անհրաժեշտ փոփոխություններ՝ Բանկի կողմից մատուցվող ծառայությունների մշտական և շարունակական կատարելագործման նպատակով:

Միաժամանակ Բանկում մշտական ուշադրության ներքո է պահվում նաև հաճախորդների սպասարկման համար պատասխանատու աշխատակիցների գործունեությունը, որոնց աշխատանքի որակը ուղղակի հարաբերակցության մեջ է հաճախորդների թվի աճի հետ: Սպասարկման որակի մակարդակը բացահայտելու և անհրաժեշտության դեպքում բարելավելու նպատակով Բանկում կազմակերպվում են նաև «Mystery Shopping» մեթոդաբանության հիման վրա կառուցված ուսումնասիրություններ:

Բանկի մանրածախ ֆինանսական ծառայությունների զարգացման ոլորտում կարևոր ուղղություն է դիտարկվում միջազգային արագ դրամական փոխանցումների տեսականու բազմազանեցումը և ծավալային աճի ապահովումը: Ի հավելումն Բանկում գործող 8 միջազգային դրամական փոխանցումների համակարգերին, որոնք են Անելիք, Migom, БТФ-союз, PrivatMoney, Blizko, Быстрая почта, Avers և Xpress Money համակարգերը, 2009 թվականին Բանկը միացել է նաև Money Gram միջազգային դրամական փոխանցումների համակարգին: Արդյունքում միջազգային փոխանցումների ծավալը կազմել է 124,957 մլն. դրամ:

Հաշվի առնելով Բանկի մասնաճյուղային ցանցի շարունակական ընդլայնումը, կարևոր խնդիր է հանդիսանում ազգաբնակչության կողմից կատարվող բազմաբնույթ կոմունալ վճարումների և հեռախոսավարձերի ընդունման ոլորտում

Բանկի ընդգրկվածության աստիճանը: Հաշվետու տարում, նախորդ տարվա համեմատ, աճը կազմել է 1.7 անգամ և կազմել 1.9 մլրդ. դրամ:

Ծառայությունների բազմազանման և սպասարկման որակի բարելավման արդյունքում, զգալիորեն ընդլայնվեց հաճախորդների շրջանակը: 2009 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի գործող հաճախորդների թվաքանակը կազմել է 44,448, որը 2008 թ. դեկտեմբերի 31-ի համեմատ աճել է 18,423-ով կամ 70.8%-ով:

Վճարահաշվարկային գործառնություններ

Փաստաթղթային գործառնություններ

Հաշվետու ֆինանսական տարվա ընթացքում Բանկի փաստաթղթային գործառնությունների ընդհանուր ծավալը կազմել է 3,886,345 ԱՄՆ դոլար, որից 570,360 ԱՄՆ դոլարը տրամադրվեց EBRD-ի հետ իրականացվող առևտրի խթանման ծրագրի շրջանակներում:

Միջազգային դրամական փոխանցումներ

Հաշվետու ֆինանսական տարում միջազգային դրամական փոխանցումների համակարգով փոխանցումների ծավալը կազմել է 23,021,995 ԱՄՆ դոլար :

Հաշվետու ֆինանսական տարում SWIFT համակարգով փոխանցումների ծավալը կազմել է 244,628,424 ԱՄՆ դոլար:

Պլաստիկ քարտեր

Պլաստիկ քարտերի թողարկման և սպասարկման ոլորտը Բանկի համար շարունակում է մնալ զարգացման հեռանկարային ուղղություն, որի համար ներդրվում են տեխնիկատեխնոլոգիական նորամուծություններ՝ հաշվի առնելով ներկա պայմաններում հաճախորդների աճող պահանջարկը և անկանխիկ վճարումների ավելացման մեծ ներուժը:

Հաշվետու տարում Բանկը թողարկել է 19,640 հատ տեղային և միջազգային վճարային քարտ, իսկ տարեվերջին քարտերի քանակը կազմել է 38,140 հատ, կամ շուկայում թողարկված քարտերի 8%-ը: Պլաստիկ քարտերով գործառնությունների զարգացման համար Բանկն ընդլայնել է կանխիկացման և առևտրի սպասարկման կետերի թիվը, մշտապես հանդես է գալիս նոր քարտային պրոդուկտների և բոնուսային ծրագրերի առաջարկներով: 2009 թվականի վերջին Բանկն ավարտեց ՀՀ բանկային քարտերի շուկայում նոր և բացառիկ Classic-M քարտային ծրագրի մշակման աշխատանքները: Classic-M քարտը Հայաստանում կառաջարկվի միայն ԱՐԱՐԱՏԲԱՆԿԻ կողմից, այն ժամանակակից Mifare (առանց կոնտակտի) տեխնոլոգիայի վրա հիմնված երկակի կիրառման (Dual) քարտ է,

որում համադրված են Արքա համակարգի վճարային քարտի և Երևանի Մետրոպոլիտենում ուղևորությունների համար վճարումներ կատարելու միջոցի բոլոր հնարավորությունները:

Հաշվետու տարվա վերջի դրությամբ Բանկի սպասարկման ցանցը ներառում է 134 առևտրի և սպասարկման կետեր, որոնցից 23-ը կանխիկացման կետեր են, ինչպես նաև 30 բանկոմատներ: Բանկոմատների և սպասարկման կետերի միջոցով Բանկի քարտապանների կողմից կատարված կանխիկացման գործարքների գումարը կազմել է 17.4 մլրդ. ՀՀ դրամ, իսկ անկանխիկ գործարքների ծավալը՝ 3.6 մլրդ. դրամ:

Կադրային քաղաքականություն

Ինչպես և նախորդ ժամանակաշրջանում, այնպես էլ հաշվետու տարվա ընթացքում Բանկի ղեկավարությունն իր անմիջական ուշադրության ներքո է պահել անձնակազմի կառավարման գործընթացին վերաբերվող հարցերը:

Քաջ գիտակցելով անձնակազմի դերը 2009 թվականի ծրագրավորված ցուցանիշների ապահովման գործում և Բանկի անձնակազմի մասնագիտական հմտությունների և ունակությունների կատարելագործման կարևորությունը, Բանկի Վարչության կողմից հաշվետու տարվա սկզբին հաստատվեց և այնուհետև իրականացվեց Բանկի աշխատակիցների մասնագիտական վերապատրաստման ծրագիրը, որի ներքո կազմակերպվեցին մոտ 30 համապատասխան սեմինարներ և դասընթացներ:

Ձուգահեռաբար Բանկում հաշվետու տարվա ընթացքում կազմակերպվեցին նաև աշխատակիցների մասնագիտական համապատասխանության ուսումնասիրմանն ուղղված միջոցառումներ, որոնց արդյունքում մշակվեցին հստակ քայլեր՝ բացահայտված բացթողումները և թերությունները շտկելու և աշխատակիցների մասնագիտական ունակությունները զարգացնելու և կատարելագործելու նպատակով:

Բանկում իրականացվող Ինստիտուցիոնալ Ջարգացման Ծրագրի ներքո փորձագիտական վերլուծության ենթարկվեցին նաև Բանկում անձնակազմի կառավարման ոլորտը կանոնակարգող բոլոր ներքին իրավական ակտերը, որի արդյունքում մշակվեց համալիր ծրագիր՝ Բանկում անձնակազմի կառավարման մակարդակը համաշխարհային լավագույն փորձին և բիզնես մշակույթին համապատասխանեցնելու նպատակով:

Ձուգահեռաբար, միջազգային այլ խորհրդատվական կազմակերպությունների հետ համագործակցության շրջանակներում, կազմակերպվեցին նաև սեմինարներ և դասընթացներ, որոնք նպաստեցին Բանկում մասնագիտական բարձր վարկանիշ ունեցող անձնակազմի ձևավորմանը:

Միաժամանակ, նոր աշխատակիցների հավաքագրման ընթացքում սկսվեց էլ ավելի մեծ ուշադրություն դարձվել թեկնածուների մասնագիտական հատկանիշներին և ունակություններին, որի արդյունքում Բանկում ձևավորում է Հայաստանի բանկային համակարգում իր արհեստավարժությամբ աչքի ընկնող

համախոհների միասնական թիմ, որն իր լավագույն ջանքերն է ներդնում Բանկի շարունակական զարգացման գործում:

31.12.09թ. դրությամբ Բանկում աշխատում են 312 աշխատակից:

Բանկի աշխատակազմն ըստ տարիքային ընտրված խմբերի ունի հետևյալ կառուցվածքը`

- մինչև 30 տարեկան աշխատակիցների թիվը կազմում է 158, կամ ընդհանուրի 50.6%-ը,
- 30-45 տարեկան աշխատակիցների թիվը` 87, կամ ընդհանուրի 27.9%-ը,
- 45-ից բարձր աշխատակիցների թիվը` 67, կամ ընդհանուրի 21.5%-ը:

Բանկի աշխատակիցներից 152-ը կանայք են, իսկ 160-ը` տղամարդ:

Բանկի գործունեության կազմակերպման համար կարևոր նշանակություն ունի նաև ֆինանսաբանկային համակարգում ձեռք բերած գիտելիքներ ու աշխատանքային փորձ ունեցող մասնագետներով համալրված թիմը: Բանկի ընթացիկ գործունեությանն առնչվող բիզնես գործընթացներում ընդգրկված է 266 անձանցից բաղկացած աշխատակազմ, որի կառուցվածքն ըստ աշխատանքային տարիների ունի հետևյալ կառուցվածքը`

- մինչև 5 տարվա աշխատանքային փորձ ունեցող աշխատակիցների թիվը կազմում է 193 կամ ընդհանուրի 72.6%-ը,
- 5-ից 10 տարվա աշխատանքային փորձ ունեցող աշխատակիցների թիվը կազմում է 36 կամ ընդհանուրի 13.5%-ը,

10 տարուց ավելի աշխատանքային փորձ ունեցող աշխատակիցների թիվը կազմում է 37 կամ ընդհանուրի 13.9%-ը:

Տարածքային գործունեություն

Հաշվետու տարում ևս Բանկի տարածքային քաղաքականությունն ուղղված էր մասնաճյուղային ցանցի ընդլայնմանը ՀՀ տարածքում` ներառելով զարգացման ներուժ և բանկային ծառայությունների պահանջարկ ունեցող տարածաշրջանները:

Բանկի տարածքային ցանցի զարգացման արդյունավետ քաղաքականության մասին է վկայում 2008 թվականի ընթացքում գործարկված 11 մասնաճյուղերի հաջող գործունեությունը:

Տարվա ընթացքում առաջնահերթ խնդիր էր նաև ձևավորված տարածքային ցանցի ամրապնդումը` մասնաճյուղերի տարածքային պայմանների բարելավումը, ծառայությունների որակի բարձրացումը, կադրերի որակավորման մակարդակի բարձրացումը:

Ձուգահեռաբար կատարվեցին մեծ կապիտալ ներդրումներ Բանկի այլ մասնաճյուղերի վերակառուցման, վերանորոգման և տեխնիկական վերազինման նպատակով, որի շնորհիվ Բանկի հաճախորդների համար հնարավորություն ստեղծվեց սպասարկվել հարմարավետ պայմաններում և առանց ժամանակի ավելորդ կորուստների: Ձեռք բերվեց տարածք Արմավիրի մարզի մարզկենտրոն Արմավիր քաղաքում` 2010 թվականի 1-ին եռամսյակում Բանկի համանուն

մասնաճյուղ ստեղծելու նպատակով:

Հաշվի առնելով հաշվետու տարում էջմիածին քաղաքում գործող Բանկի մասնաճյուղի գործունեության արդյունքները և հեռանկարային զարգացման միտումները, մասնաճյուղի դիրքերի ամրապնդման և շարունակական զարգացման նպատակով որոշում ընդունվեց ձեռք բերել սեփական տարածք նաև էջմիածին քաղաքում:

Մասնաճյուղային ցանցի ընդլայնման քաղաքականության ներքո հաշվետու տարվա ընթացքում որոշում ընդունվեց ստեղծել մասնաճյուղեր Հայաստանի բնակչության թվով երրորդ քաղաքում: Արդյունքում հիմնադրվեցին Բանկի Վանաձոր և Վանաձոր-1 մասնաճյուղերը:

Հարկ է նշել, որ ի շնորհիվ կիրառվող սպասարկման որակի բարձր մակարդակի և օգտագործվող տեխնոլոգիաների, ինչպես նաև հմուտ անձնակազմի, Բանկի Վանաձոր մասնաճյուղն արդեն իսկ հաշվետու տարվա ընթացքում հատեց ծախսատարության ցուցանիշը և սկսեց աշխատել շահույթով:

Հեռանկարային զարգացման առումով մասնաճյուղային ցանցի ընդլայնման ծրագիրը կրելու է շարունակական բնույթ և պահպանելու է աճի միտումը:

Ամփոփ ֆինանսական տվյալներ

Ցուցանիշի անվանումը	2008 թվ.	2009 թվ.
Ջուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	580,872	365,416
Սեփական կապիտալի միջին մեծություն	4,868,765	7,541,215
Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE), %	11.93	4.8
Ջուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	580,872	365,416
Ընհանուր ակտիվների միջին մեծություն	28,056,652	32,649,492
Ակտիվների շահութաբերություն (ROA), %	2.07	1.1
Ջուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	580,872	365,416
Գործառնական եկամուտ	2,788,911	1,976,879
Ջուտ շահույթի մարժա (NPM), %	20.8	18.5
Գործառնական եկամուտ	2,788,911	1,976,879
Ընհանուր ակտիվների միջին մեծություն	28,056,652	32,649,492
Ակտիվների օգտագործման գործակից (AU), %	9.9	6.1
Ընհանուր ակտիվների միջին մեծություն	28,056,652	32,649,492
Սեփական կապիտալի միջին մեծություն	4,868,765	7,541,215
Սեփական կապիտալի մուլտիպլիկատոր (EM)	5.8	4.3
Ջուտ տոկոսային եկամուտ	1,386,219	1,308,928
Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն	18,320,722	20,248,318
Ջուտ տոկոսային մարժա (NIM)	7.6	6.5
Տոկոսային եկամուտ	2,100,127	2,310,770
Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն	18,320,722	20,248,318
Եկամտաբեր ակտիվների եկամտաբերություն	11.5	11.4

Տոկոսային ծախսեր	713,908	1,001,842
Պարտավորություններ, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր	9,132,883	19,969,062
Ծախսատարություն այն պարտավորությունների, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր	7.8	5.0
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	580,872	365,416
Բաժնետոմսերի միջին կշռված թիվը	798	1072
Զուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով (EPS)	728	340.7
Սպրեդ, %	3.6	6.4

Բանկի հետագա զարգացման նկարագիրը

Բանկի հեռանկարային զարգացման համար անհրաժեշտ բոլոր ծրագրերը և քայլերը, դրանց հասնելու խնդիրների լուծումները պայմանավորված են Բանկի առջև դրված նպատակներով, որոնցից կարևորներն են հանդիսանում է բանկային համակարգում Բանկի դիրքի վերելքը ֆինանսական ցուցանիշների սանդղակներում, ինչպես նաև Բանկի հաճախորդների պահանջմունքների բավարարումը և նոր հաճախորդների ներգրավումը:

Բանկի հետագա զարգացման նպատակով, շեշտադրվելու են հետևյալ ցուցանիշները .

- Բանկի ընդհանուր ակտիվների մնացորդների կտրուկ աճ, հիմնականում եկամտաբեր ակտիվների հաշվին, որոնց գերակշռող մասը կազմելու են վարկային ներդրումները,

- Պասիվների մնացորդների աճի պայմաններում ներգրավվող միջոցներից ժամկետային ավանդների մնացորդների, ցրահանջ ավանդների մնացորդների, ինչպես նաև ընդհանուր կապիտալի աճ,

- միջազգային ֆինանսավարկային կազմակերպությունների հետ համագործակցության մակարդակի աճը ենթադրում է միջազգային ֆինանսավարկային կազմակերպություններից ներգրավված միջոցների շարունակական աճ,

- վարկավորման համակարգի հետագա զարգացում՝ նպատակ ունենալով բարձրացնել մասնաճյուղերի ներգրավվածության մակարդակը,

- Բանկի միջնորդական ծառայությունների ընդլայնման, սպասարկման որակի բարձրացման արդյունքում նախատեսվում է ստացվելիք կոմիսիոն գումարների աճ,

- վճարահաշվարկային ծառայությունների, այդ թվում՝ պլաստիկ քարտերով գործառնությունների ծավալման նպատակով նախատեսվում է ATM-երի թվի աճ և տեղաբաշխվածության ընդլայնում,

- եկամտաբեր ակտիվների ծավալների աճի հաշվին տոկոսային եկամուտների աճ,

- Բանկի կողմից միջնորդական և վճարահաշվարկային ծառայությունների աճի հաշվին ոչ տոկոսային եկամուտների աճ,

- վերը բերված ցուցանիշների աճի դեպքում կարծանագրվի նաև զուտ շահույթի աճ:

Գրանթ Թորնթոն Ամիո ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան 0012
Վաղարշյան 8/1

Հ. +374 10 260 964
Ֆ. + 374 10 260 961

Grant Thornton Amyot LLC
8/1 Vagharshyan Str.
0012 Yerevan, Armenia

T + 374 10 260 964
F +374 10 260 961

www.gta.am

Անկախ աուդիտորի եզրակացություն

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի -ի բաժնետերերին և Խորհրդին.

Մենք ստուգել ենք ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի (այսուհետ՝ «Բանկ») կից ներկայացվող համառոտ ֆինանսական հաշվետվությունների (որոնք ներառում են 2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին համառոտ հաշվետվությունը, ինչպես նաև նույն ամսաթվին ավարտված տարվա համար համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին համառոտ հաշվետվությունները) համապատասխանությունը Բանկի՝ 2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և նույն ամսաթվին ավարտված տարվա ամբողջական ֆինանսական հաշվետվությունների հետ՝ համաձայն Աուդիտի միջազգային ստանդարտների:

Բանկի ղեկավարությունը պատասխանատու է սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստելու և արժանահավատորեն ներկայացնելու համար: Մեր պատասխանատվությունն է ստուգել սույն համառոտ ֆինանսական հաշվետվությունների համապատասխանությունը վերոհիշյալ ամբողջական ֆինանսական հաշվետվությունների հետ:

Ի հավելումն, մենք աուդիտի ենք ենթարկել Բանկի 2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և նույն ամսաթվին ավարտված տարվա ամբողջական ֆինանսական հաշվետվությունները՝ պատրաստված համաձայն Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Մտանդարտների, և 2010թ. մարտի 22 ամսաթվով թվագրված մեր եզրակացությունում մենք ներկայացրել ենք վերապահունով դրական եզրակացություն ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ՝ պայմանավորված Բանկի դուստր ընկերության ֆինանսական հաշվետվությունների չհամախմբման հետ:

Մեր կարծիքով, կից ներկայացվող համառոտ ֆինանսական հաշվետվությունները ճշգրտորեն են ստացվել Բանկի ամբողջական ֆինանսական հաշվետվություններից:

2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի ֆինանսական վիճակի, գործունեության արդյունքների, ինչպես նաև աուդիտի շրջանակների վերաբերյալ ավելի լավ պատկերացում կազմելու համար համառոտ ֆինանսական հաշվետվությունները պետք է դիտարկել դրանց ստացման համար հիմք հանդիսացող ֆինանսական հաշվետվությունների, ինչպես նաև դրանց վերաբերյալ մեր աուդիտորական եզրակացա թյան հետ համատեղ՝

Գազիկ Գյուլբուղադյան
Տնօրեն/բաժնետեր

Արեն Աղաջանյան
Աուդիտոր



22 սարտի, 2010թ.
ք. Երևան



Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	Ծանոթ.	2009թ. դեկ.31-ին ավարտված տարվա համար (ստուգված)	2008թ. դեկ.31-ին ավարտված տարվա համար (ստուգված)
Տոկոսային և մնացորդային եկամուտներ	6	2,310,770	2,100,127
Տոկոսային և մնացորդային ծախսեր	6	(1,001,842)	(713,908)
Զուտ տոկոսային եկամուտներ		1,308,928	1,386,219
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	7	372,222	282,940
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	7	(99,717)	(103,329)
Զուտ կոմիսիոն և այլ եկամուտներ		272,505	179,611
Արտարժույթային գործարքներից զուտ շահույթ		310,285	351,975
Վաճառքի համար մատչելի ներդրումներից զուտ շահույթ		63,378	17,191
Այլ եկամուտներ	8	21,783	36,678
Վարկային կորուստների արժեզրկման ծախս	9	(58,063)	(30,226)
Անձնակազմի գծով ծախսեր	10	(704,880)	(562,793)
Հիմնական միջոցների մաշվածություն	18	(158,289)	(122,089)
Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա	19	(8,068)	(7,795)
Այլ ծախսեր	11	(583,016)	(518,456)
Շահույթ մինչև հարկում		464,563	730,315
Շահութահարկի գծով ծախս	12	(99,147)	(149,443)
Տարվա շահույթ		365,416	580,872
Այլ համապարփակ եկամուտ			
Իրական արժեքի փոփոխությունից չվաստակված զուտ օգուտ		154,786	186,925
Վաճառքի համար մատչելի ներդրումների իրացումից ֆինանսական արդյունքին փոխանցված զուտ օգուտ		(99,643)	(176,157)
Այլ համապարփակ եկամուտին վերաբերող բաղկացուցիչ մասի շահութահարկ		(16,175)	-
Տարվա այլ համապարփակ եկամուտ առանց հարկերի		38,968	10,768
Ընդամենը տարվա համապարփակ եկամուտ		404,384	591,640
Մեկ բաժնետոմսին ընկնող շահույթ			
Բազային	13	0.3	0.7

9-ից 61 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	Ծանոթ.	2009թ. դեկ. 31-ի դրությամբ (ստուգված)	2008թ. դեկ. 31-ի դրությամբ (ստուգված)
ԱԿՏԻՎՆԵՐ			
Դրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ կենտրոնական բանկում	14	16,268,959	10,524,093
Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	15	4,721,252	974,768
Հաճախորդների տրված վարկեր և փոխատվություններ	16	16,096,190	12,164,364
Վաճառքի համար մատչելի ներդրումներ	17	4,923,181	2,996,407
Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	25	-	1,591,742
Հիմնական միջոցներ	18	1,153,515	1,181,602
Ոչ նյութական ակտիվներ	19	46,407	53,747
Հետաձգված հարկային ակտիվ	12	-	4,992
Վաճառքի համար պահվող ակտիվներ		45,448	46,505
Այլ ակտիվներ	20	211,057	94,047
Ընդամենը՝ ակտիվներ		43,466,009	29,632,267
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ			
Պարտավորություններ			
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	21	9,412,771	4,859,672
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	22	25,725,656	16,601,573
Թողարկված պարտքային արժեթղթեր	23	250,205	400,789
Ընթացիկ հարկի գծով պարտավորություն		-	112,348
Հետաձգված հարկային պարտավորություն	12	6,172	-
Այլ պարտավորություններ	24	122,219	113,283
Ընդամենը՝ պարտավորություններ		35,517,023	22,087,665
Սեփական կապիտալ			
Բաժնետիրական կապիտալ	26	5,362,005	5,362,005
Էմիսիոն եկամուտ		766,001	766,001
Գլխավոր պահուստ		300,000	270,000
Այլ պահուստներ		64,700	25,732
Զբաղիչված շահույթ		1,456,280	1,120,864
Ընդամենը՝ սեփական կապիտալ		7,948,986	7,544,602
Ընդամենը՝ պարտավորություններ և սեփական կապիտալ		43,466,009	29,632,267

Ֆինանսական հաշվետվությունները, ներկայացված 3-ից 61 էջերում ստորագրվել են Բանկի վարչության նախագահի և գլխավոր հաշվապահի կողմից 2010թ. մարտի 22-ին:

9-ից 61 էջերում ներկայացված ծանուցումները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:


Ա. Օսիպյան
 Վարչության նախագահ




Տ. Գալստյան
 Գլխավոր հաշվապահ

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	Բաժնե- տիրական կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Գլխավոր պահուստ	Վաճառքի համար մատչելի ներդրումների գծով վերագնա- հատման պահուստ	Կուտակված շահույթ	Ընդամենը
Հաշվեկշիռը 01.01.2008թ. դրությամբ (ստուգված)	3,640,000	-	250,000	14,964	559,992	4,464,956
Բաժնետիրական կապիտալի ավելացում	1,722,005	-	-	-	-	1,722,005
Էմիսիոն եկամուտ	-	766,001	-	-	-	766,001
Հատկացում պահուստին	-	-	20,000	-	(20,000)	-
Սեփականատերերի հետ գործարքներ	1,722,005	766,001	20,000	-	(20,000)	2,488,006
Տարվա շահույթ	-	-	-	-	580,872	580,872
Այլ համապարփակ եկամուտ						
Իրական արժեքի փոփոխությունից չվաստակված զուտ օգուտ	-	-	-	186,925	-	186,925
Վաճառքի համար մատչելի ներդրումների իրացումից ֆինանսական արդյունքին փոխանցված զուտ օգուտ	-	-	-	(176,157)	-	(176,157)
Ընդամենը տարվա համապարփակ եկամուտ	-	-	-	10,768	580,872	591,640
Հաշվեկշիռը 31.12.08թ. դրությամբ (ստուգված)	<u>5,362,005</u>	<u>766,001</u>	<u>270,000</u>	<u>25,732</u>	<u>1,120,864</u>	<u>7,544,602</u>

Հազար ՀՀ դրամ

	Բաժնե- տիրական կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Գլխավոր պահուստ	Վաճառքի համար մատչելի ներդրումների գծով վերագնա- հատման պահուստ	Կուտակված շահույթ	Ընդամենը
Հատկացում պահուստին	-	-	30,000	-	(30,000)	-
Սեփականատերերի հետ գործարքներ	-	-	30,000	-	(30,000)	-
Տարվա շահույթ	-	-	-	-	365,416	365,416
Այլ համապարփակ եկամուտ						
Իրական արժեքի փոփոխությունից չվաստակված զուտ օգուտ	-	-	-	154,786	-	154,786
Վաճառքի համար մատչելի ներդրումների իրացումից ֆինանսական արդյունքին փոխանցած զուտ օգուտ	-	-	-	(99,643)	-	(99,643)
Այլ համապարփակ եկամուտին վերաբերող բաղկացուցիչ մասի շահութահարկ	-	-	-	(16,175)	-	(16,175)
Ընդամենը տարվա համապարփակ եկամուտ	-	-	-	38,968	365,416	404,384
Հաշվեկշիռը 31.12.09թ. դրությամբ (ստուգված)	5,362,005	766,001	300,000	64,700	1,456,280	7,948,986

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	31.12.09-ին ավարտված տարվա համար (ստուգված)	31.12.08-ին ավարտված տարվա համար (ստուգված)
Գործառնական գործունեությունից դրամական հոսքեր		
Շահույթ մինչև հարկումը	464,563	730,315
<i>Ծշգրտումներ</i>		
Ակտիվների հնարավոր կորուստների արժեզրկման ծախս	58,063	30,226
Մաշվածության և անորոշագիծ մասհանումներ	166,357	129,884
Հիմնական միջոցների վաճառքից շահույթ	(130)	(804)
Ստացվելիք տոկոսներ	(93,966)	(15,589)
Վճարվելիք տոկոսներ	29,336	(28,381)
Ոչ առևտրային ակտիվների արտարժույթային փոխարկումներից զուտ վնաս	45,727	20,076
Դրամական հոսքեր նախքան գործառնական ակտիվներում և պարտավորություններում փոփոխությունները	669,950	865,727
<i>(Ավելացում)/նվազում գործառնական ակտիվներում</i>		
Դեպոնացված միջոցներ ՀՀ ԿԲ-ում	(208,408)	(150,279)
Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	(3,901,992)	2,144,841
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	(3,523,482)	(2,525,470)
Այլ ակտիվներ	(88,455)	341,570
Ավելացում/(նվազում) գործառնական պարտավորություններում		
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	3,560,197	1,097,940
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	2,176,657	(1,018,091)
Այլ պարտավորություններ	8,936	(404,677)
Զուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից մինչև շահութահարկը	(1,306,597)	351,561
Վճարված շահութահարկ	(228,303)	(87,095)
Գործառնական գործունեությունից զուտ դրամական հոսքեր	(1,534,900)	264,466
Ներդրումային գործունեությունից դրամական հոսքեր		
Ներդրումային արժեթղթերի (առք)/վաճառք	(217,049)	2,251,233
Հիմնական միջոցների առք	(130,332)	(784,962)
Հիմնական միջոցների վաճառք	260	1,096
Ոչ նյութական ակտիվների առք	(728)	(16,710)
Ներդրումային գործունեությունից զուտ դրամական հոսքեր	(347,849)	1,450,657
Ֆինանսական գործունեությունից դրամական հոսքեր		
Բաժնետիրական կապիտալի թողարկում	-	2,488,006
Պարտքային արժեթղթերի թողարկում	250,000	400,000
Պարտքային արժեթղթերի մարում	(400,000)	(250,000)
Ֆինանս. կազմակերպ.-ից վարկերի ստացում	542,779	1,674,103
Այլ երկարաժամկետ վարկեր	5,099,926	300,000
Ֆինանսական գործունեությունից զուտ դրամական հոսքեր	5,492,705	4,612,109
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ	3,609,956	6,327,232

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբի դրությամբ	11,039,386	4,860,663
Արտարժույթի փոխարկման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	1,500,387	(148,509)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջի դրությամբ (ճանոթ.14)	16,149,729	11,039,386

Լրացուցիչ տեղեկատվություն

Ստացված տոկոսներ	2,216,804	2,084,536
Վճարված տոկոսներ	(972,506)	(742,289)